ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 մայիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

75
(2741)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ՝ ԱԺ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ ԿԱՐԳԵԼԵՆ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանն այն կարծիքին է, որ Ազգային ժողովի աշխատակազմը պետք է գնահատական տա այն լրագրողների պահվածքին, ում հավատարմագրել է կամ թողել, որ մտնեն խորհրդարանի շենք: Բանն այն է, որ երեկ ՔՊ-ական պատգամավորը սոցցանցի իր էջում ուղիղ եթերից կտրված մի հատված էր տեղադրել, որտեղ լրագրողներն ակտիվ քննարկում էին խորհրդարանի միջադեպը, երբ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանի ելույթից հետո իրավիճակը սրվել էր: Եվ, ահա, տեսանյութից մի հատված տեղադրելուց հետո Արթուր Հովհաննիսյանը լրագրողների հետ զրույցում նշել է. «Պետք է արժանի գնահատական ստանա նաեւ ԱԺ աշխատակազմի կողմից, ովքեր հավատարմագրել են ու թողել են, որ նա մտնի շենք»: Այսինքն՝ Արթուր Հովհաննիսյանը հիմա էլ ցանկանում է այնպես անել, որ որոշ լրագրողների մուտքը խորհրդարան արգելվի: Այն, որ այս իշխանությունները (որոնց թվում թերեւս ամենաշատն են նախկին լրագրողները) պայքարում են չորրորդ իշխանության ներկայացուցիչների դեմ, գաղտնիք չէ: Բազմիցս են դեպքեր եղել, երբ հենց վարչապետ Նիկոլ Փաշինյանն է որակումներ տվել լրագրողներին: Հիմա էլ ՔՊ խմբակցության քարտուղարը, որը սպառնում էր կտրել ընդդիմադիր ՄԻՊ թեկնածուի ականջներն ու լեզուն, ԱԺ աշխատակազմին կոչ է անում հետեւել լրագրողների աշխատանքին: Ահա այսպես են Հայաստանի «ժողովրդավար» իշխանությունները հետեւում խոսքի եւ լրագրողների ազատությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ «Հայաստան» խմբակցության դաշնակցական պատգամավորների հարաբերությունները բավականին լարված են վերջին շրջանում: Ավելին՝ մեր տեղեկություններով՝ Քոչարյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգամավորների՝ մայիսի 4-ի հանդիպման ժամանակ երկրորդ նախագահը չի էլ թաքցրել իր դժգոհությունը դաշակցականներից, որ խիստ կառուցողական դիրք են գրավել: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ այդ առիթով Ռոբերտ Քոչարյանի եւ Իշխան Սաղաթելյանի միջեւ անգամ լուրջ խոսակցություն է եղել: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով մեկնաբանություն խնդրեց Իշխան Սաղաթելյանից: Վերջինս մեզ հետ զրույցում ասաց. «Մեր մեջ միշտ էլ լուրջ խոսակցություններ լինում են, բայց մնացած մասը իրականությանը չի համապատասխանում: Երկրորդ նախագահի հետ նորմալ, աշխատանքային հարաբերություններ են»:



ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, պարզվում է, բազմապրոֆիլ անձնավորություն է եւ իրեն փորձում է նաեւ այլ ոլորտներում: Ապացույցը նախարարի պահվածքն է, ՀՀ կառավարության նիստերի ժամանակ հնչեցրած հայտարարությունները: Բանն այն է, որ Վահան Քերոբյանը գրեթե յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ արտահայտվում է, կարծիք ասում այն դեպքում, երբ հարցն այլ ոլորտների է վերաբերում: Պարզվում է՝նա ոչ միայն կարող է խոսել խոշոր եղջերավոր անասունների պահման պայմանների, ֆերմերների տարբեր բողոքների մասին, այլ նաեւ, օրինակ, խոսել «Վայլդբերիզ»-ից տուժած քաղաքացիների մասին: Երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, նա անցավ դեղերի ոլորտին, խոսեց դեղագործական արդյունաբերության զարգացման հնգամյա ծրագրի մասին: «Ժողովուրդ» օրաթերթը մայիսի 24-ի իր համարում գրել էր, որ Վահան Քերոբյանը ԱՄԷ այցի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել, որում որպես ձեռքբերում նշված է եղել ԱՄԷ հանդուրժողականության եւ համակեցության նախարարության եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միջեւ կնքված հուշագիրը: Ստացվում է՝ Վահան Քերոբյանն իրեն փորձում է ամենատարբեր ոլորտներում. միգուցե ցանկանում է նոր պաշտոն ստանալ:

Մի քանի օր է, ինչ Ազգային անվտանգության ծառայությունը մեկը մյուսի հետեւից պաշտոնական հաղորդագրություններ է տարածում Հայաստան թմրանյութեր ներմուծելու վերաբերյալ: Նախ՝ մայիսի 13-ին հայտնի դարձավ, որ 1 տոննա հերոին է ներմուծվել Հայաստան, որը կապվում է ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի անվան հետ, սակայն հետախուզման մեջ գտնվող պատգամավորը հայտարարել էր, թե իրենք են բացահայտել դեպքն ու հայտնել իրավապահներին: Գործով կալանավորվել է «Մրգենի» ՍՊ ընկերության ներմուծումների եւ գնման բաժնի պետ Մ.Ղ-ն , իսկ երեկ ձերբակալվեց ընկերության պահեստապետը: Այս հայտարարությունից մի քանի օր անց ԱԱԾ-ն հայտնեց, որ մայիսի 18-ին Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետություն են պատրաստվում ներկրել իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի տարատեսակ թմրամիջոցների խմբաքանակ, ինչպես նաեւ զենք, զինամթերք: Պարզվում է՝ այսքանով պատմությունը չի ավարտվում. «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայությունը նոր բացահայտում է արել՝ ՀՀ թմրանյութ ներմուծելու գործընթացով. իրավապահները պարզել են, որ գործում խառնված են ներկայիս քաղաքական իշխանության կարկառուն դեմքեր: Իսկ թե ով կամ ովքեր են նրանք, կհայտնենք «Ժողովուրդ» օրաթերթի առաջիկա հրապարակումներով:

ԲԱԲԱՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ՀԱՄԵՄԱՏԵԼԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԾԱՂՐԵԼ Է

«Քաղաքացիական խմբակցության» պատգամավոր Գուրգեն Արսենյանը, երեկ լրագրողների հետ զրույցում անդրադառնալով ՀՀ վարչապետի՝ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու պատրաստակամությունը, ասաց. «Որպես Գուրգեն Արսենյան՝ հայտարարում եմ իմ լիակատար աջակցությունը Նիկոլ Փաշինյանի կողմից իրականացվող բաղաքականությանը, այդ թվում՝ խաղաղության օրակարգը իր ավարտին հասցնելու ձգտումներին: Ես երկու ձեռքով պաշտպանելու եմ մեր խաղաղության օրակարգը, այն գործընթացը, որը հարեւան երկրի հետ բերելու է խաղաղության, այդ թվում նաեւ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչմանը»:

Հարցին՝ անտեսվելու է արդյոք արցախցիների կարծիքը, քանի որ իրենք իրենց ապագան Ադրբեջանի կազմում չեն տեսնում, Արսենյանը պատասխանեց. «Ես՝ որպես ՀՀ պատգամավոր, առաջնորդվում եմ ՀՀ պետական շահերի սպասարկմամբ. դա համար մեկ խնդիրն է, որի համար մենք գործում ենք: Բոլոր մնացած հարցերը ՀՀ ինքնիշխանության եւ կենսագործունեության օրակարգի բաղադրիչներ են: ՀՀ քաղաքական գործիչները ՀՀ ժողովրդից ստացել են մանդատ՝ սպասարկելու ՀՀ պետական շահերը»:

Լրագրողի մեկ այլ հարցին՝ Արցախում հայեր չեն ապրում արդյոք, ՔՊ պատգամավորը նշեց. «Արցախում ապրում են մեր հայրենակիցները, Ջավախքում էլ են ապրում հայեր, Բեյրութում էլ, Գլենդելում էլ, Ավստրալիայում էլ: Պետական գործիչների առաջնային խնդիրը Հայաստանի շահերի սպասարկումն է: Բոլորով կանգնած ենք այդ երկընտրանքի առջեւ, երբ մեր միտքն ու սիրտը սկսում է հակասել իրար: Երբեմն ՀՀ պետական շահերի պաշտպանությունը չի համընկնում հայերի ազգային շահերի ալգորիթմին»:

Արսենյանի այս հայտարարությանը «Արմլուր»-ի հետ զրույցում անդրադարձել է Արցախի նախկին արտգործնախարար եւ Պահպանողական կուսակցության ղեկավար Դավիթ Բաբայանը: Նրա խոսքով՝ Արցախի անվտանգության ապահովումը Հայաստանի համար հնարավորությունների խնդիր չէ, այլ ցանկության:

«Այդ պատգամավորը ինչ ասում է, պարզապես սարսափելի է: Սա որեւէ առնչություն չունի Հայաստանի հնարավորությունների հետ. սա անմիջապես ածանցյալ է նրա ներքին զգացմունքներին Արցախի հանդեպ: Այստեղ բացարձակ հնարավորությունների խնդիր չկա, բոլոր հնարավորություններն էլ կան Արցախի կողքին լինելու: Արցախը Գլենդելը չէ, Գլենդելում հայությանը կոտորած չի սպասվում, մնացած տեղերում էլ չի սպասվում: Թող այդ ցնդաբանությունները մի կողմ դնեն, որովհետեւ Գլենդելում, Մոսկվայում, Փարիզում եւ այլուր հայերը ցեղասպանության առաջ չեն կանգնած:

Արցախի ցեղասպանության տակ ստորագրում է նաեւ այդ Գուրգեն Արսենյան կոչեցյալը, որը 100%-ով պատրաստ է Արցախը հանձնել նույնիսկ մինչեւ այդ գործընթացը սկսելը:

Արցախը անմիջապես հայոց պետականության, ընդհանուր հայրենիքի մի մասն է: Արցախը կորցնելուց հետո Հայաստանն է կորչելու, եւ թող Արսենյանները, ովքեր չեն հասկանում կամ միտումնավոր են դա անում, չփորձեն մարդկանց ուշադրությունը շեղել գլենդելներով ու բեյրութներով: Եթե որեւէ մեկը արցախատյաց է, ինչպես Արսենյանը, այդ մարդը կյանքում չի պայքարի Արցախի համար, չի պայքարելու նաեւ Գորիսի համար: Եթե դու չես ուզում մի բան անել, չի նշանակում՝ չես կարող»,- նշեց Բաբայանը:

Անդրադառնալով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու հայտարարությանը՝ Բաբայանը պատասխանեց, որ այդ ամենը բերելու է միայն արցախահայության ցեղասպանության. «Սա միայն Արցախի խնդիրը չէ, սա հայ ազգի ինքնորոշման հարցն է: Ի վերջո, այդ ազգը գոյություն ունի թե ոչ, եւ ովքեր են այդ հայերը՝ Արսենյանն՞ը, թե՞ Եռաբլուրում հանգչողները: Ես չգիտեմ՝ ինչ է կատարվել այս ժողովրդի հետ, կերպարանափոխվել են, մուտացիայի են ենթարկվել: Թող ոչ մեկը կասկած չունենա, որ եթե նման քայլերով, նման մոտեցմամբ իր սեփական ժողովրդի մի հատված տանում է մատաղացու դարձնելու, լավ չի լինելու բոլորի համար:

Ես չեմ հասկանում, ժողովրդին ապուշի տե՞ղ են դնում, թե՞ ժողովուրդը ուզում է այդպիսի բաներ լսել: Մենք ինքնորոշվել ենք 1988 թվականին եւ միասին ենք ինքնորոշվել, ու եթե չլիներ Արցախյան ազգային ազատագրական շարժումը, անկախ Հայաստան էլ չէր լինի: Եթե Արցախից հրաժարվում են, դա իրենցից կտրում շպրտում են, պարզ է՝ ինչ հետեւանքներ է ունենալու: Ես չգիտեմ՝ հետագայում ինչ կլինի, այդ Արսենյանները որտեղ կլինեն, բայց հիմա Արցախը Գլենդելի հետ համեմատելը ուղղակի ժողովրդին ծաղրելն է, էշի տեղ դնելն է եւ այդ ատելությունը Արցախի հանդեպ չզսպելու կարողությունն է»,- եզրափակեց Դավիթ Բաբայանը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՆՈՒՆՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԵՊՀ ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

Երեկ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտարարություն էր տարածել՝ հայտնելով, որ կաբառք ստանալու մեղադրանքով ձերբակալվել են ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկանը, նրա տեղակալը, նույն ֆակուլտետի երկու դասախոս, ինչպես նաեւ վերջիններիս կաբառք տված 5 անձինք:

Այսպիսով, խոսքը ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի, նույն ֆակուլտետի ամբիոնի դոցենտ Գագիկ Տոնոյանի եւ այլ անձանց մասին է, որոնք, օրինակ, 2023 թվականի փետրվարից մարտն ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետի տարբեր կուրսերում սովորող ուսանողների օգտին ապօրինի գործողություններ կատարելու դիմաց, որպես կաշառք պահանջել եւ ստացել են տարբեր չափի գումարներ:

Ֆակուլտետի դեկանի հետ կապված սա միակ ուշագրավ դրվագը չէ. հեղափոխությունից հետո դեկան Հայկ Սարգսյանը բավականին ակտիվ է եղել, անգամ ինքն է 2019 թվականին կազմակերպել Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների հետ: Սարգսյանը դեկանի պաշտոնում նշանակվել է 2000 թվականին: Եվ չնայած հեղափոխությունից հետո Սարգսյանը դրական է արտահայտվել Փաշինյանի իշխանության հասցեին, անգամ տնտեսական հեղափոխությունն իրողություն համարել, սակայն նաեւ եղել են դեպքեր, երբ, որպես ԵՊՀ դեկան, նաեւ դեմ դիրքորոշմամբ է հանդես եկել:

Ի վերջո, ինչո՞ւ երկարամյա դեկանին հիշեցին հենց հիմա: Հարց է առաջանում, թե դեկան Հայկ Սարգսյանը, վերցնելով այդ գումարները, ինչ էր արդյոք դա անում, եւ արդյոք այդ գործունեության մասին տեղյակ է եղել նաեւ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Սրանք հարցեր են, որոնց պատասխաններն իսկապես կարեւոր են: ArmLur.am-ը երեկվանից փորձում էր այս հարցերի պատասխանները ստանալ ԵՊՀ ռեկտորից, սակայն նրա հետ կապ հաստատել այդպես էլ չհաջողվեց:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐԺՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ

Մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկմանը հաջորդած դատավորի ընտրությունը շառաչուն ապտակ էր քծնանքի ճամփան բռնած ուժային կառույցների եւ դատական իշխանության բոլոր ներկայացուցիչների համար:

Դատավոր Արմեն Դանիելյանը, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության աչքին բարձրանալու համար վճիռներ էր կայացնում՝ մերժելով արդարադատությունը, ինքը մերժվեց ՔՊ-ի կողմից: Երբ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը դատավոր Դանիելյանից հրապարակավ թիվ մեկ ամբիոնից բացատրություն պահանջեց իրեն անհիմն ու ապօրինի կալանավորելու համար, դատավորի հեղինակությունն իր ամբարտավանությամբ փորձեց պաշտպանել տխրահռչակ Հովիկ Աղազարյանը, սակայն երեկ կայացած դատավորի քվեարկության արդյունքները ցույց տվեցին, որ Դանիելյանի կերպարը անգամ ՔՊ-ում է մերժելի:

Բանն այն է, որ քաղաքական իշխանությունների սրտից բխող կալանքներ տված դատավոր

Արմեն Դանիելյանին խորհրդարանում չօգնեցին իր կայացրած որոշումները. նա չընտրվեց նոր ստեղծված Հակակոռուպցիոն դատարանի դատավոր:

Հիշեցնենք, որ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թափուր տեղի համար ԲԴԽ-ն առաջադրել էր Արմեն Դանիելյանի, Ելիզավետա Դանիելյանի եւ Արսեն Նիկողոսյանի թեկնածությունները: Երեկ ընտրվեց Ելիզավետա Դանիելյանը. նրա օգտին կողմ էր քվեարկել 67 պատգամավոր:

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Քանի որ Սփյուռքի մի շարք հայրենակիցներ պարբերաբար դիմում են ինձ իրենց համայնքներում եւս ստորագրահավաքը կազմակերպելու խնդրանքով, խորհրդանշական ակցիա սկսեցինք Ֆրանսիայում:

Ինչու՞ հենց Ֆրանսիայում. Ֆրանսիան այն առաջին եւ բացառիկ երկրներից է, որ նախագահի մակարդակով բարձրացրել է Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցի անհրաժեշտությունը եւ բարձրացրել է այն ժամանակ, երբ Նիկոլ Փաշինյանը կարեւորագույն այդ հարցի մասին բնավ չէր խոսում:

Ֆրանսիայում իրականացվող ստորագրահավաքին, ցավոք սրտի, կարող են մասնակցել միայն Հայաստանի քաղաքացիություն եւ Հայաստանում ընտրելու-ընտրվելու իրավունք ունեցող մարդիկ. նպատակն այն է, որ այս կարեւոր գործընթացի մասնակիցը դառնան հենց Հայաստանի ընտրողները:

Ստորագրահավաքը կշարունակվի մինչեւ կիրակի օրը Փարիզի Իսի լե Մուլինո (Issy-les-Moulineaux) համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում:

Հ.Գ. Ֆրանսիայում ապրող մեր բոլոր հայրենակիցները կարող են կապ հաստատել ինձ հետ տեղի եւ ժամի հետ կապված տեղեկատվություն ստանալու համար»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Armlur.am-ը տեղեկացավ, որ քրեակատարողական համակարգում փոփոխություններ կկատարվեն: Մասնավորապես, նախատեսվում է քրեակատարողական հիմնարկներում գործող օպերատիվ ստորաբաժանումները կենտրոնացնել Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում ստեղծվող օպերատիվ վարչության ենթակայության ներքո: Բանն այն է, որ ներկայումս Քրեակատարողական ծառայության օպերատիվ բաժինը եւ քրեակատարողական հիմնարկների օպերատիվ բաժինները գործում են միմյանցից անկախ, քրեակատարողական հիմնարկների օպերատիվ բաժինները գործում են քրեակատարողական հիմնարկի պետի ենթակայությամբ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունի Քրեակատարողական ծառայությունը, տվյալ դեպքում՝ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը:

Ըստ այդմ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի հետ հակասությունը վերացնելու եւ քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել կատարել նշված կառուցվածքային փոփոխությունը, որի արդյունքում Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության ենթակայությամբ կկենտրոնացվեն քրեակատարողական հիմնարկների օպերատիվ ստորաբաժանումները՝ որպես տարածքային բաժիններ եւ բաժանմունքներ:

Բացի այդ, օպերատիվ վարչության ստորաբաժանումները նոր կադրերով համալրելու նպատակով կսահմանվեն մրցույթի եւ ուսուցման համապատասխան ընթացակարգեր: Նախագիծը ընդգրկված էր կառավարության երեկվա նիստի օրակարգում, ընդունվելուց հետո այն կուղարկվի խորհրդարան:

ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղեւորափոխադրումներ եւ բեռնափոխադրումներ իրականացնող վարորդները պարբերական վերապատրաստում պետք է անցնեն: Մասնավորապես, այդպիսի կանոնակարգում է նախատեսվելու ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով: Բանն այն է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են վարորդական վկայական ստանալու համար որակավորման պահանջները, սակայն ուղեւորափոխադրումներ եւ բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների պարբերական վերապատրաստման եւ որակավորման պահանջներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն, իսկ դա պետք է իրականացվի ԵՄ օրենսդրության պահանջներին ներդաշնակեցնելու համար: Այսպիսով, սահմանվելու է, որ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E», «D1E» կարգ ունեցող վարորդները պետք է պարբերական մասնագիտական վերապատրաստում անցնեն եւ մասնագիտական որակավորում ստանան: Հավելենք, որ խոսքը վերաբերում է ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական բեռնափոխադրումներ եւ ուղեւորափոխադրումներ իրականացնող վարորդներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ Է ԱՌԱՋԱՆԱԼՈՒ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հանդիպում է ունեցել ՀՀ-ում Շվեդիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Պատրիկ Սվենսոնի հետ:

Անդրադառնալով Բրյուսելում Շառլ Միշելի հյուրընկալությամբ հայ-ադրբեջանական բանակցությունների արդյունքներով հնչեցված հայտարարություններին՝ գործընկերներիս ներկայացրի ՀՀ գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշումը, որի 2-րդ կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Այս համատեքստում ահազանգեցի, որ նույնիսկ եթե Նիկոլ Փաշինյանը ստորագրի որեւէ փաստաթուղթ, որով Արցախը թողնի Ադրբեջանի կազմում, լեգիտիմության լուրջ խնդիր է առաջանալու:

Պարոն Սվենսոնին տեղեկացրի, որ Նիկոլ Փաշինյանը խոսում է ամբողջ հայ ժողովրդի անունից, մինչդեռ իմ նախաձեռնած «Ոչ Արցախի էթնիկ զտմանը» ստորագրահավաքին արդեն իսկ հավաքվել է ավելի քան 300.000 ստորագրություն:

Խոսելով Սոթքում առկա իրավիճակի լարմանն ուղղված ադրբեջանական գործողությունների մասին, որի պայմաններում Սոթքի հանքի մոտ 800 աշխատակիցներ չէին կարողանում աշխատանքի գնալ, իսկ Նիկոլ Փաշինյանը խոսում էր ԱԺ-ում բոլորովին այլ թեմաների մասին, գործընկերոջս ներկայացրի, որ անթուլատրելի էր այլեւս հանդուրժել խոսքերը, որոնք հնչում էին ԱԺ ամբիոնից՝Արցախը փաստացի ճանաչելով Ադրբեջանի կազմում:

Այս պայմաններում հրատապ խնդիրներին ուշադրություն հրավիրելու նպատակով որոշել էի, ի նշան բողոքի, իրականացնել քաղաքական ակցիա, չիջնել ամբիոնից, որն ընդունված է ժողովրդավարական երկրներում, սակայն ընդմիջման ժամին անվտանգության աշխատակիցներն ինձ բռնի ուժով հեռացրին ԱԺ նիստերի դահլիճից:

Դեսպանին ներկայացրի նաեւ մեր հանձնաժողովի արտահերթ նիստի մանրամասները, այդ թվում նաեւ պատգամավոր, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի կողմից այնպիսի արտահայտությունների օգտագործումը ՄԻՊ-ի՝ ընդդիմադիր խմբակցությունների թեկնածուի հասցեին, ինչպես, օրինակ, «Լեզուդ կկտրեմ», «Ականջդ կկտրեմ»:

Ահազանգեցի նաեւ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի կողմից քաղաքացուն՝կնոջն ուղղված հայհոյանքի մասին, եւ նշեցի, որ այս անթույլատրելի վարքագիծը դրսեւորած պատգամավորները մնացել են անպատիժ այն դեպքում, երբ Նիկոլ Փաշինյանը Հայաստանը համարում է «ժողովրդավարության բաստիոն»:

Իր խոսքում դեսպանը շնորհակալություն հայտնեց նշված ահազանգերն իրեն հասցնելու համար եւ հավաստիացրեց, որ ընդունել է այդ հաղորդագրությունները՝ ի գիտություն, կփոխանցի դրանք ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի իր գործընկերներին, որպեսզի նրանք ինկորպորացնեն համապատասխան գործողությունները Շվեդիայի կողմից հովանավորվող ծրագրում, որն իրականացվում է խորհրդարանում:

Պարոն Սվենսոնը նաեւ արտահայտեց իր մտահոգությունները նման միջադեպերի վերաբերյալ առհասարակ եւ ընդգծեց խորհրդարանում վարքագծի կանոնների մշակման եւ պահպանման կարեւորությունը:

ԼՈՒՐԵՐ

ՇԱՀԱՎԵՏ ՊԱՇՏՈՆ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պարտականությունները կատարող Անժելա Նուշիկյանը նոր պաշտոն է ստացել, քանի որ նրա որդին եւ Աշոտ Փաշինյանը սովորել են նույն դասարանում:

Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պարտականությունները կատարող Անժելա Նուշիկյանը հենց նույն ժամանակահատվածում ձեռք է բերել երկու մեծ եւ ընդարձակ բնակարան:

ArmLur.am-ն այս առնչությամբ կապ հաստատեց վերջինիս հետ. նա, լսելով մեր հարցադրումները, զայրացած նշեց. «Դրանք բոլորը ստեր են, եւ պարզելը շատ հեշտ է: Այսուհետ ինձ հետ կապ չհաստատեք, ճիշտ հասցեով չեք զանգել: Աշոտ Փաշինյանն իմ որդու հետ բացարձակ կապ չունի: Իմ տղան սովորել է Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցում»:

Իսկ մեր այն հարցին, թե արդյոք բնակարաններ այս ընթացքում ձեռք չի բերել, մեր զրուցակիցը վրդովված անջատեց հեռախոսը:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պարտականությունները կատարող Անժելա Նուշիկյանն այդ պաշտոնին է նշանակվել առանց գիտական աստիճան ունենալու:

Տեղեկությունը պարզաբանելու համար ArmLur.am-ը կապ հաստատեց Անժելա Նուշիկյանի հետ, որը մեզ հետ զրույցում հաստատեց մեր տեղեկությունը:

«Գիտական աստիճան, այո՛, ես չունեմ, եւ ես հիմա ռեկտորի պարտականությունները կատարող եմ»,-նշեց մեր զրուցակիցը:

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է

ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հայտարարել է ՀԱՊԿ-ի համատեղ օպերատիվ-մարտական գործունեությանը հայկական կողմի մասնակցության կարեւորության մասին:

«Հայաստանը մեր կազմակերպության անդամն է, մեր դաշնակիցը: Մենք շահագրգռված ենք խաղաղության հաստատմամբ եւ ամեն ինչ անելու ենք Կովկասում իրավիճակը կայունացնելու համար:

Միեւնույն ժամանակ, ես հատկապես կցանկանայի նշել Հայաստանի մասնակցության կարեւորությունը ՀԱՊԿ-ում օպերատիվ եւ մարտական պատրաստության վերաբերյալ համատեղ աշխատանքին»,- ասել է Շոյգուն կազմակերպության պաշտպանության նախարարների խորհրդի՝ Մինսկում կայացած հանդիպմանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է 500ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մախսանենգությունների ֆինության գլխավոր վարչությունում «Նոր Զովք» ՍՊ ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպքի առթիվ ֆինվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ս.Ս-ն, հանդիսանալով շինանյութի մանրամեծածախ վաճառքով զբաղվող «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության գործադիր տնօրենը, ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «ԱԿԹՐԵՅԴ-ՍՈՖԹ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վ.Ս.-ի օժանդակությամբ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով 2016 թվականի ապրիլ ամսից 2023 թվականի փետրվար ամիսը ներառյալ թաքցրել է «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հարկման օբյեկտը եւ հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ:

Մասնավորապես, «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքների ծավալները, վաճառքից առաջացած եկամուտները թաքցնելու եւ միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար Ս.Ս.-ն ներգրավել է Վ.Ս-ին, որը վճարի դիմաց հանցանքի կատարման համար տրամադրել է գործիքներ ու միջոցներ եւ վերացրել է խոչընդոտներ, այն է՝ «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունում ներդրել է «1C» առեւտրային ծրագիրը, որը համակցել է էլեկտրոնային սերվերային համակարգին եւ սերվերային համակարգն ու դրա պարունակած՝ «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության եւ այլ կազմակերպությունների իրական շրջանառությունների վերաբերյալ տվյալները թաքցրել է իր հաշվառման հասցեի նկուղում:

Հարկ է նշել, որ նույն սերվերային համակարգից հայտնաբերվել էին նաեւ «Նոր Զովք» ՍՊ ընկերության կողմից թաքցրած շրջանառության վերաբերյալ տվյալները:

Այդկերպ «ԱՎԱՄ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Ս.-ն, տիրապետելով ընկերության կողմից իրացված ապրանքների իրական շրջանառությանը, որը 2016թ. ապրիլ ամսից 2023թ. փետրվարի 20-ը ներառյալ կազմել է 7.613.869.637 ՀՀ դրամ, Վ.Ս.-ի օժանդակությամբ առանձնապես խոշոր չափերով ավելացված արժեքի հարկը եւ շահութահարկը չվճարելու նպատակով թաքցրել է ընկերության կողմից հիշյալ ժամանակահատվածում իրականացված հարկվող գործարքների մի մասը, նույն հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված հաշվարկային փաստաթղթերով ցույց է տվել 3.437.911.927 ՀՀ դրամ շրջանառություն՝ չհայտարարագրելով 4.175.957.710 ՀՀ դրամ շրջանառությունը, եւ 2016թ. ապրիլ ամսից 2023թ. փետրվար ամիսների ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի միասնական, 2019-2021 թթ. շահութահարկի տարեկան հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ:

Ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ «Ավամ Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Ս.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ընկերության նախկին տնօրեն Վ.Ա.-ի, գլխավոր հաշվապահներ Մ.Խ.-ի եւ Ս.Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, իսկ Վ.Ս.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են, եւ վերջիններիս ներկայացվել է մեղադրանք:

Նախաքննության ընթացքում «Ավամ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Ս.Ս.-ն պետական բյուջե է վերականգնել շրջանառությունը թաքցնելու արդյունքում չվճարված գումարից 500.000.000 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները:

Մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված բացակայելու արգելքը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ԱՋԳԱԿԱՆԸ

ՀՀ ֆինչական կոմիտեի Արագածոտնի մարզային ֆինչական վարչությունում ֆինվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված ֆինչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են Աշտարակ քաղաքի 56-ամյա բնակչուհու սպանության մի շարք հանգամանքներ. ենթադրյալ հանցագործությունը կատարած անձը կալանավորվել է:

2023 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 17:10-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Աշտարակի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող շենքերից մեկի բնակարանում հայտնաբերվել է տանտիրուհու դին՝ պարանոցի ձախ կողմի քնային զարկերակի շրջանում կտրած վերքով:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողությունների, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, որը տուժողի ազգականն է՝ ծնված 1982թ.:

2023 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, վերջինս այցելել է բարեկամուհու՝ Աշտարակ համայնքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող բնակարան, որի հյուրասենյակում վերջինիս առանձին դաժանությամբ ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ նախաքննությամբ դեռեւս չպարզված գործիքով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

40-ամյա տղամարդը մայիսի 20-ին հայտնաբերվել է Երեւան քաղաքի Երվանդ Քոչար փողոցում գտնվող հյուրանոցային համալիրում եւ ձերբակալվել՝ սպանություն կատարելու անմիջականորեն ծագած կասկածի հիմքով:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ տղամարդու նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ մեղադրյալը տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ԱՊԱՐԱՆԻ ԿՐԱԿՈՑՆԵՐ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԵՐԿՐՈՐԴ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

Քիչ առաջ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ իրավապահները 1 տարի անց Ապարանի կրակոցների գործով գտել են երկրորդ հրազենից կրակոցներ արձակած Անդրանիկ Ավագյանին: Նշենք, որ նա չի ընդունում մեղադրանքը եւ հայտնել է, որ նա դեպքի օրը վերոնշյալ տարածքում չի եղել:

Ի դեպ, հայտնել ենք, որ գործով հարցաքննվել էր ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի եղբայրը՝ Մնացական Ասատրյանը, որն առավել հայտնի է Գռզո մականունով:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում էր հայտնվել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի եղբոր ցուցմունքը, թե նա ինչ է պատմել իրավապահներին ողբերգական կրակոցների գործով:

Մասնավորապես, նա իր ցուցմունքում հայտնել է, որ կրակոցների օրը՝ 2022 թվականի հունիսի 19-ի առավոտվանից, տանն է եղել, զբաղվել է տան գործերով:

Կեսօրին (հստակ ժամը չի հիշում) իր տուն եկան Արագածոտնի փոխմարզպետ Էդգար Փարվանյանը եւ Ապարանի գնդի հրամանատար, իր իմանալով՝ ներկայումս ՊՆ նախարարի խորհրդական Ռազմիկ Պետրոսյանը: Նրանք Ռազմիկ Պետրոսյանի ՊՆ համարանիշներով «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով էին եկել: Նստած տանը դեսից դենից՝ կենցաղային թեմաներով են զրուցել, հաց կերել: Էդգարը իր ընտանիքի հետ մտերիմ փոխհարաբերությունների մեջ է, Ռազմիկը՝ նույնպես: Հստակ ժամը չի հիշում, իրեն զանգահարեց...»:

Հիշեցնենք, որ նախորդ տարի՝ հունիսի 19-ին հնչած կրակոցների հետեւանքով սպանվել էր 3 անձ՝ 27-ամյա պայմանագրային զինծառայող Հմայակ Միքայելյանը, Տիգրան Հարությունյանը, որն Ապարանի համայնքապետ Կարեն Եղիազարյանի հարազատներից էր, աշխատում էր «Գնթունիք» սուպերմարկետում, եւ Սամվել Սանդրոյանը:

Դեպքից հետո անմիջապես լուրեր տարածվեցին, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հայհոյելու համար վիճաբանություն է սկսվել մի խումբ երիտասարդների եւ ՔՊ-ական պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի ու Արագածոտնի փոխմարզպետ Էդգար Փարվանյանի հարազատների միջեւ:

Ըստ այդ լուրերի՝ վիճաբանության ընթացքում ՔՊ-ական պատգամավորների հարազատները ավտոմատներով կրակել են Փաշինյանին հայհոյած երիտասարդների վրա: Գործով կալանավորված է մեկ անձ՝ Արմեն Հովհաննիսյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 75 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

88 ՀԱՍՏԻՔ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

Մայիսի16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը որոշում է ընդունել Տավուշի մարզպետի՝ 2023թ. մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին միավորները հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշումը շարադրել նոր խմբագրմամբ, դադարեցնել տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչության տեղական ինքնակառավարման եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի եւ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գործունեությունը, դադարեցնել գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության բնապահպանության բաժնի գործունեությունը, դադարեցնել ֆինանսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գործունեությունը: Մարզպետ Հայկ Ղալումյանը մայիսի 19-ին որոշում է ընդունել Տավուշի մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին: Հաստատված հաստիքացուցակը խիստ ուռճացած է. այն ունի 88 հաստիք: Ներկայումս այդ 88 հաստիքներից զբաղեցված է 75-ը, 13 հաստիք թափուր է: Տավուշի մարզպետարանից, պատասխանելով լրագրողիս տեղեկատվական հարցմանը, նշել են, որ թափուր հաստիքների զբաղեցնել-չզբաղեցնելու հարցը կորոշվի Տավուշի մարզպետի աշխատակազմում ընթացող կառուցվածքային փոփոխությունների ավարտից հետո: Տավուշի մարզպետարանը փաստացի կառավարում է միայն երկու ոլորտ՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի պետական բուժհիմնարկները. մարզպետի աշխատակազմը այդ ոլորտները կառավարում է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ու Առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Ըստ հաստատված հաստիքացուցակի՝ Տավուշի մարզպետն ունի թվով 3 տեղակալ, երկուական օգնական եւ խորհրդական, մարզպետի երկու տեղակալներն ունեն օգնականներ, մարզպետարանն ունի գլխավոր քարտուղար եւ գլխավոր քարտուղարի տեղակալ: Մարզպետարանը ՄԱԿ-ը կամ ՆԱՏՕ-ն է, որ գլխավոր քարտուղարի հաստիք ունենա; Տավուշի մարզպետարանը կարելի է կոչել Իջեւանի մարզպետարան, քանզի մարզպետարանի գրեթե բոլոր պաշտոնյաները Իջեւան համայնքի բնակիչներ են, Տավուշի մարզի Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան խոշոր համայնքների բնակիչներից Տավուշի մարզպետարանում աշխատող պաշտոնյաներ չկան: Տավուշի մարզն արդեն երկու տարի ղեկավարում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

773,3 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ՇԻՆՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԻՄԱՑ

Կառավարությունն իր երեկվա՝ մայիսի 25-ի նիստում որոշեց փոխհատուցել 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով, գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ճանապարհաշինական եւ ինժեներական աշխատանքներ կատարող կազմակերպությունների կողմից կապալային աշխատանքների կատարմանը ներգրավված գույքին հակառակորդի կողմից հասցված վնասը:

Նախագծի հիմնավորման մեջ ասվում է. «2022 թվականի սեպտեմբերի 13-ից 14-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով ճանապարհաշինական եւ ինժեներական աշխատանքներ կատարող ընկերությունների տեխնիկաների դուրս բերումը ռազմական գործողությունների գոտիներից հնարավոր չի եղել ապահովել, որի արդյունքում դրանք անցել են հակառակորդի տիրապետության տակ:

Մասնավորապես, հարձակման ենթարկված տարածքներում աշխատանքներ կատարող թվով չորս ՍՊԸ-երի պատկանող ընդհանուր 17 միավոր տեխնիկա անցել է հակառակորդի տիրապետության տակ, որից՝ 5 միավոր բուլդոզեր, 9 միավոր էքսկավատոր, 3 միավոր «Կամազ» ինքնաթափ, իսկ մեկ ՍՊԸ-ին պատկանող 1 միավոր էքսկավատորը եւ 1 միավոր «Կամազ» ինքնաթափն ու մեկ ՍՊԸ-ին պատկանող 1 միավոր ավտոկռունկը հակառակորդի գնդակոծության հետեւանքով վնասվել են: Քանի որ համապատասխան աշխատանքները կատարվել են պետական կարիքների համար, ՀՀ կառավարության՝ 2022թ. դեկտեմբերի 15-ի N 1924-Ա որոշմամբ՝ նախատեսվել է Պաշտպանության նախարարության կարիքների համար կնքված կապալային աշխատանքների պայմանագրերով համապատասխան տրանսպորտային միջոցների անվերադարձ կորստի եւ վնասվելու պայմաններում համապատասխան կազմակերպություններին փոխհատուցում տալու ընթացակարգը:

Դրա շրջանակներում համապատասխան պայմանագրերում ներառվել են գույքին հասցված վնասը պատվիրատուի կողմից փոխհատուցվելու դրույթները. գույքերին հասցված վնասը սահմանված կարգով գնահատվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության կողմից, որի ընդհանուր չափը կազմում է 773,340.0 հազար դրամ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 09.11.2021թ. թիվ 1279-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում եզրակացություն է կայացվել թվով 19 իրավաբանական անձանց փոխահատուցել հասցված վնասը, իսկ հակառակորդի տիրապետության տակ անցած 1 միավոր բուլդոզեր ԿՏ3 6-10 տեխնիկան հնարավոր չի եղել գնահատել՝ ելակետային փաստաթղթերի ամբողջական բացակայության պատճառով:

ՀԻՇՈՒՄ ԵՆ

ԿՈՎԵՐԻ ԹԵՄԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

«Եթե կովը ցրտադիմացկուն չէ, ուրեմն կով չէ, ու այն կովը, որն օրը 10 լիտր կաթ է տալիս, ժամանակակից իմաստով ինքը կով չէ». սրանք վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերն են, որոնք նա ասել է երեկ՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանի հարցին պատասխանելիս:



Հետաքրքիր է, որ սա առաջին դեպքը չէ, երբ Նիկոլ Փաշինյանն անդրադառնում է այդպիսի թեմաների: Դեռ 2020 թվականի հունվարի 23-ին՝ Կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը տեղական կաթի որակի մասին խոսելիս ասաց. «ՀՀ-ում արտադրվող կաթը չի համապատասխանում չափանիշներին, որն անհրաժեշտ է բարձրորակ արտադրանք ստանալու համար, որովհետեւ մենք սովորել ենք, որ կաթը պետք է կթենք ձեռքով, ալյումինի դույլերով, ռեզինե սապոգներով, եւ այդ կաթի մեջ պետք է անպայման գոմաղբի որոշակի ներկայություն լինի: Թրիքոտ կաթով հնարավոր չի բարեկեցություն ստանալ: Չի կարելի պահանջել, որ մթերողները թրիքոտ կաթը մթերեն»: Դեռ 2011 թվականին էլ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանն էր այցելել Արագածոտնի մարզ ու հավաքված գյուղացիներին հորդորել կով կթելիս հետեւել հիգիենայի կանոններին: «Հարգելի՛ գյուղացիներ, օրինակ՝ դուք գիտե՞ք, որ կով կթելուց առաջ պետք է ձեռքերը լվանալ, դույլի վրա մառլյա գցել, կովի կուրծքը տաք ջրով լվանալ, փափուկ սրբիչով չորացնել. սրանք տարրական կանոններ են»,- հավաքվածներին բացատրել էր նախկին վարչապետը: Հիմա էլ, փաստորեն, Նիկոլ Փաշինյանն է որոշել հիշել կովերին ու որոշել, որ վերջիններս պետք է ցրտադիմացկուն լինեն, հակառակ դեպքում կով չեն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 6-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Գյուլիքեխվյան փողոց, 5 շենք, 3 հասցեում գտնվող 79,2 ք.մ. բնակարան եւ 8,8 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 31600000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 12.07.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»

ՀՀ կառավարությունն իր երեկվա՝ մայիսի 25-ի նիստում որոշեց 19,9 մլն դրամ հատկացնել Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) վարկային եւ դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի շրջանակներում կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի ներքո ձեւավորված պարտավորությունները կատարելու համար վճարված կանխավճարի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ վճարումներն իրականացնելու համար:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանի եւ ՎԶԵԲ-ի միջեւ 2016թ. մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր» վարկային համաձայնագրով նախատեսվում է 14,6 մլն եվրո գումար տրամադրել Հայաստանի Հանրապետությանը համաձայնագրով սահմանված ծրագրի իրագործման համար:

Հարկ է նշել, որ ծրագրի հիմնական նպատակն է Գյումրի քաղաքում ունենալ անվտանգ երթեւեկության կազմակերպման համար բարեկարգ փողոցներ եւ էներգախնայող արտաքին լուսավորության ցանց: Ծրագրի շրջանակներում, մասնավորապես, նախատեսվում է իրականացնել Գյումրի քաղաքի ճանապարհների հիմնանորոգման եւ քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ, այդ թվում՝ ասֆալտի եւ մայթեզրերի նորոգում, ինչպես նաեւ ջրահեռացման/դրենաժային/ ենթակառուցվածքների արդիականացում, հետիոտնային նոր տարածքների կառուցում, քաղաքային լուսավորության ենթակառուցվածքների վերակառուցում եւ Գյումրի քաղաքի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության եւ գործողությունների պլանի մշակում:

Ծրագրի իրականացման արդյունքում Ա եւ Բ Տրանշներով արդեն իսկ հիմնանորոգվել է 34 փողոց եւ 3 հրապարակ:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 23,840,000 եվրո, որից 14,600,000 եվրո վարկային միջոցներ տրամադրվում են ՎԶԵԲ-ի կողմից: Վարկը բաղկացած է 3 մասնաբաժիններից՝ Տրանշ Ա եւ Տրանշ Բ՝ յուրաքանչյուրը՝ 5.3 մլն եվրո, Տրանշ Գ՝ 4 մլն եվրո:

Հարկ է նշել, որ վարկային միջոցների տրանշներին համապատասխան դրամաշնորհային միջոցները եւս տրամադրվելու են երեք տրանշներով (Տրանշ Ա-ի եւ Տրանշ Բ-ի համար՝ 2,650,000 - ական եվրո, Տրանշ Գ-ի համար՝ 2,000,000 եվրո):

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային եւ դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում կապալառու կազմակերպության հետ 2020թ.-ին կնքված պայմանագրերի համաձայն վճարված կանխավճարի նկատմամբ հաշվարկված եւ այս տարի կատարված ԱԱՀ վճարումներից հետո 12017 եւ 12018 միջոցառումների համար նախատեսված 2023թ.-ի պետական բյուջեով նախատեսված համաֆինանսավորման գումարները սպառվել են:

Այժմ պայմանագրի ներքո վճարված կանխավճարի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ վճարման նպատակով անհրաժեշտ են 19,935.6 հազար դրամ վարկային եւ դրամաշնորհային պետական համաֆինանսավորման միջոցներ, հետեւաբար այս նախագծով առաջարկվում է 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներից 19,935.6 հազար դրամ գումարը վերաբաշխել:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՈՒԲԱՅՈՒՄ

«Յունիբանկ»-ը եւ Mastercard-ը իրականացնում են համատեղ արշավ, որի շրջանակում նոր քարտատերերը կարող են շահել տուրիստական ուղեւորություններ: «Վայելի՛ր ամառը «Յունիբանկ»-ի եւ Mastercard-ի հետ» արշավի ընթացքում, որպես ամսական մրցանակ, կխաղարկվի երկօրյա ուղեւորություն Հայաստանում երկու հոգու համար, իսկ գլխավոր մրցանակը կլինի 7-օրյա ուղեւորությունը Դուբայ երկու հոգու համար:

«Վայելի՛ր ամառը «Յունիբանկ»-ի եւ Mastercard-ի հետ» արշավին կարող են մասնակցել այս տարվա մայիսից մինչեւ հուլիսը ներառյալ «Յունիբանկ»-ում Mastercard տեսակի քարտ ձեւակերպած եւ արշավի ընթացքում ամսական 30 000 ՀՀ դրամ եւ ավելի գումարի անկանխիկ գնումներ կամ վճարումներ կատարած անձինք: Գլխավոր մրցանակը կխաղարկվի արշավի ավարտին նշված ժամանակահատվածում Mastercard տեսակի քարտ ձեւակերպած եւ 100.000 ՀՀ դրամ եւ ավելի գումարի անկանխիկ գնումներ կամ վճարումներ կատարած անձանց միջեւ: Արշավի մասնակիցների միջեւ հաղթողներն ընտրվելու են պատահականության սկզբունքով:

Տարեցտարի Հայաստանում անկանխիկ վճարումները գնալով ավելի մեծ մասսայականություն են վայելում: Ապրանքների եւ ծառայությունների համար վճարելու այս եղանակը հեշտ է եւ հարմար: «Յունիբանկ»-ը կշարունակի խրախուսել հաճախորդներին կատարել անկանխիկ վճարումներ՝ առաջարկելով տարբեր արտոնություններով քարտեր եւ կատարելագործելով UNIMobile հավելվածը, որը կարելի է ներբեռնել App Store-ից եւ Google Play-ից:

Mastercard քարտ ձեւակերպելու համար անհրաժեշտ է դիմել «Յունիբանկ»-ի 54 մասնաճյուղերից որեւէ մեկը:

«Վայելի՛ր ամառը «Յունիբանկ»-ի եւ Mastercard-ի հետ» արշավի կանոններին եւ պայմաններին ծանոթացե՛ք www.unibank.am կայքում:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու հեռ.՝ (+37410) 59 55 55:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՆԻ ՔՈՉԱՐԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԽԱՅԻՆ

Գրող, հեղինակ Անի Քոչարը սպասում է իր երկրորդ բալիկին. այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց Անին:

«Լուրը հայտնելու օրը պատահական ընտրված չէ. ցանկանում եմ ինձ համար փոխել այս օրվա երբեմնի տխուր եւ մռայլ խորհուրդը:

25.05.2018 թվական... Սարսափ երազի էր նման: Հինգ տարի առաջ՝ այս օրը, կյանքս գլխիվայր շրջվեց: 25.05.2018թ. սարսափ երազի էր նման: Այդ օրը կյանքս բաժանվեց «մինչ եւ հետո»-ի՝ մինչեւ չարաբաստիկ ախտորոշումը (AML) եւ դրանից հետո: Թվում էր, թե ամեն բան անդառնալի կորսված է, սակայն անսասան հավատքը, համառ պայքարն ու երազել չդադարելն օգնեցին անցնելու այդ դաժան փորձությամբ, հաղթահարելու այն ու դառնալու օրինակ հազարավոր մարդկանց համար:

Կյանքը հավերժական տոն չէ, բայց եւ որեւէ պարագայում հանձնվել չկա: Իմ կյանքում նոր լուսավոր էջ եմ բացել եւ ցանկանում եմ մոռանալ 25.05.2018-ը: 2-րդ գիրքս հատուկ էի խնամքով պահում, կյանքի օրերից էջ առ էջ հավաքում մինչեւ ինձ համար բաղձալի լուրը լսելը: Ինձ համար անսահման կարեւոր էր, որ գիրքն այնպիսի մի հրաշք լուսավոր կետ պարունակի իրենում, որ կրկին ոչ թե բառերով, այլ հենց կենդանի օրինակով կյանքեր ու սրտեր փոխի, կարծրատիպեր ու նախապաշարումներ փշրի: Ողջ փառքը Տիրոջը»,-Անին այս մասին գրել է իր սոցիալական էջում: Հիշեցնենք, որ երկար տարիներ Անի Քոչարը պայքարել է չարաբաստիկ քաղցկեղի դեմ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՎԱՐԿ՝ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը փոքր բիզնեսի համար նախատեսված վարկային պրոդուկտների շարքը համալրել է նոր վարկատեսակով, որը հասանելի է՝ ձեւակերպման համար դրական վարկային պատմության հիման վրա: Վարկի տարեկան տոկոսադրույքը կկազմի 18% (փաստացի տոկոսադրույք՝ 19,56%), գումարը՝ 100 հազարից մինչեւ 5 մլն ՀՀ դրամ: Ծրագրի առաջին փուլում բանկը նախատեսում է ֆինանսավորել հանրապետության ձեռնարկատերերին մինչեւ 1 մլրդ դրամի չափով:

Նոր պրոդուկտից կարող են օգտվել փոքր բիզնեսի ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալում մանրածախ առեւտրի, արտադրության եւ ծառայությունների ոլորտներում: Հիմնական պահանջը դրական վարկային պատմությունն է եւ գործող վարկի առկայությունն այլ բանկում: Միջոցները կարելի է ուղղել ընթացիկ գործունեություն վարելուն, պարտավորությունները մարելուն եւ այլ բիզնես նպատակների լուծմանը: Վարկը տրամադրվում է 48 ամիս ժամկետով: Վարկի տրամադրման մասին որոշումը կայացվում է 2 ժամվա ընթացքում:

«Փոքր բիզնեսը բանկի աշխատանքի ստրատեգիկ ուղղություններից է, եւ մեզ համար կարեւոր է մնալ վստահելի ֆինանսական գործընկեր այս սեգմենտի հաճախորդների համար: Այդ պատճառով մենք որոշում կայացրինք վերջիններիս համար ավելի պարզ ձեւակերպմամբ պրոդուկտ մեկնարկել՝ առանց գրավի եւ լրացուցիչ ֆինանսական վերլուծության: Կարեւոր առավելություն կլինի ձեւակերպման արագությունը. որոշումը կայացվում է ընդամենը 2 ժամում: Ծրագրի սկզբնական փուլում նախատեսում ենք վերջինիս շրջանակներում ապահովել մոտ 1 մլրդ դրամի վարկային պորտֆել»,- մեկնաբանում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի Ժ/Պ Արա Ավագյանը:

Վարկի պայմանների մասին տեղեկանալ, ինչպես նաեւ հայտ ներկայացնել կարող եք բանկի կայքում կամ հանրապետության տարածքում գտնվող ցանկացած մասնաճյուղում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԼՈՒՐԵՐ

Ice Cube–Ի ԿԱՐԾԻՔԸ

Հետեւելով գրողներին, լուսանկարիչներին եւ նկարիչներին՝ երաժիշտներն ու երգիչները եւս սկսեցին խոսել արհեստական բանականության դեմ:

Վերջերս BBC-ին տված հարցազրույցում Սթինգը հայտարարել էր, որ «ճակատամարտ» է ընթանում արհեստական ինտելեկտի կողմից ստեղծված երգերի հանրաճանաչության աճից իրենց ստեղծագործությունները պաշտպանելու համար: Ամերիկացի ռեփեր Ice Cube-ը եւս այն արտիստներից է, որն իր կարծիքն է հայտնել արհեստական բանականությամբ ստեղծված երգերի վերաբերյալ: Full Send-ին տված հարցազրույցում Ice Cube-ը բացատրել է արհեստական ինտելեկտի ստեղծած երգերի հանդեպ իր արհամարհանքը՝ հայտարարելով, որ պատրաստ է դատի տալ բոլորին, որոնք օգտագործում են իր երգերը դրա միջոցով:

Հարցին, թե ինչ է նա մտածում արհեստական ինտելեկտի կողմից ստեղծված եւ վերջերս վիրուսային տարածում գտած Heart On My Sleeve թրեքի մասին, որը նմանակում է Տորոնտոյի արտիստներին՝ Դրեյքին եւ The Weeknd-ին, Ice Cube-ը պատասխանել է, որ այդպիսի երգերը «դիվային» է համարում: «Ես չեմ ուզում լսել Դրեյքի երգը, որը ստեղծված է արհեստական բանականությամբ: Ես չեմ ուզում լսել այս անհեթեթությունը: Նա պետք է դատի տա նրան, ով սա արել է»:

Cube-ը պնդել է, որ ցանկացած ոք, որը կօգտագործի արհեստական բանականության կողմից ստեղծված իր ձայնը, կկանգնի իրավական պատասխանատվության առաջ: «Ես դատի կտամ դա արած անպիտանին, մարդկանց ու հարթակին. ոչ ոք չի կարող վերցնել ձեր ձայնը եւ շահարկել այն առանց վճարելու... Ես կարծում եմ, որ արհեստական բանականությունը դեւ է, եւ կարծում եմ, որ այն կառաջացնի օրգանական մարդկանց բացասական արձագանքը»:

«ՍԱՐՍԱՓ ՖԻԼՄ»

Ռեժիսոր Լուիզ Ուորենի շնորհիվ Մոխրոտի մասին հեքիաթը կդառնա սարսափ ֆիլմ:

Նա մտադիր է արտադրել եւ բեմադրել «Մոխրոտի անեծքը» սարսափ ֆիլմը՝ հիմնված հայտնի հեքիաթի վրա, որը արդիականացվել էր երեխաների համար 1950 թվականի «Դիսնեյի» տարբերակով: Սյուժեի մանրամասները դեռեւս հայտնի չեն, սակայն հաստատվել է, որ սցենարը գրել է Հարի Բոքսլին, իսկ գլխավոր դերերում հանդես են եկել Քելի Ռայան Սանսոնը, Քրիսի Վուննան եւ Դենիել Սքոթը: Նկարահանումները կսկսվեն հաջորդ ամիս Մեծ Բրիտանիայում:

«Սա Մոխրոտի աներեւակայելի եզակի տարբերակն է, որը մենք բոլորս սիրում ենք եւ գիտենք: Մի քանի հերոսներ կմահանան նրա ձեռքով»,- Bloody Disgusting-ին ասել է Ուորենը: «Կարծում եմ՝ սարսափի սիրահարները կվայելեն իմ մութ վերապատումը»:

«Մոխրոտի անեծքի» մասին հայտարարվեց անմիջապես այն բանից հետո, երբ Dolphin Medien-ը եւ Red Shadow Studios-ը հայտարարեցին Վինի Թուխի եւ Փիթեր Պենի վրա հիմնված երկու սարսափ ֆիլմերի թողարկումների մասին, որոնք կոչվում են «Վինի Թուխ. մահվան տունը» եւ «Փիթեր Պենը գնում է դժոխք»:

● *Մայիսի 27-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «44 աստիճանի վրա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց ինձ ծանուցելու վաճառել գրավ դրված իմ գույքը:

Իրինա Գրիգորյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ո՛չ, չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն Ձեր կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեւով ծանուցել Ձեզ (պարտապանին) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, Ֆինանսական կազմակերպությունը պետք է Ձեզ գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավով ապահովված վարկի գումարը սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում գրավատունն իրավունք ունի այդ գույքն իրացնել (վաճառել) հրապարակային սակարկություններով:

ԷՋԸ՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե արտոնագիր վերցվում է մեկ ամսից ավելի ժամկետով, արդյոք արտոնագրային վճարը նվազո՞ւմ է:

Համլետ Պետրոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ղեկավարվել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի դրույթներով, որի 14-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ մեկ ամսից ավելի ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս օրենքով սահմանված 1.0 գործակիցը նվազեցվում է 0.02-ով՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությամբ ներկայացված մեկից ավելի յուրաքանչյուր ամսվա համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում հավելված 8-ով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ապրելու երկիր» կուսակցությունը, մասնավորապես՝ կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանը, որը հայտնել է Երեւանի քաղաքապետի ընտրություններին մասնակցելու մասին, բավականին մեծ ծավալով եւ բազմաքանակ պաստառներով ողողել է Երեւանի փողոցները:

Սակայն ուշագրավ է, որ Երեւանի քաղաքապետի ընտրությունների քարոզարշավը դեռ չի սկսվել. միայն հայտնի է, որ ընտրությունները տեղի են ունենալու սեպտեմբեր ամսին: Ստացվում է, որ «Ապրելու երկիր» կուսակցությունն արդեն նախընտրական քարոզարշավ է սկսել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 11 +16 + 20
Կոտայքի լեռներ	+ 6 + 9 +17 + 20
Կոտայքի նախալեռներ	+11 + 14 +21 + 23
Գեղարքունիք	+ 6 + 11 +17 + 20
Լոռի	+ 8 + 11 +19 + 23
Տավուշ	+10+ 15 +22 + 25
Արագածոտնի լեռներ	+ 6 + 9 +15 + 18
Արագածոտնի նախալեռներ	+13 + 14 + 21 + 25

Արարատ	+13 + 15 +25 + 27
Արմավիր	+11 + 13 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +16 + 18
Վայոց ձորի նախալեռներ	+12 + 14 +24 + 26
Սյունիքի հովիտներ	+13 + 17 +27 + 30
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 11 +21 + 23
Արցախ	+15 + 19 +24 + 28
Երեւան	+ 11+ 13 +24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.5.2023**
Հասցեն՝ Գերաբերունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*